նակցեց Վրաստանի ԳԱ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Կ. Դումբաձեն, որը, շնորհակալություն հայտնելով գիտական սեսիա գումարելու համար, նշեց, որ Վրաստանի գիտական հասարակայնությունը սույն իրողությունը գնահատում է ոչ միայն որպես Իվանե Ջավախիշվիլու, այլև ողջ վրաց ժողովրդի հանդեպ ցուցաբերած սիրո և հարգանքի դրսևորում։

Գիտական սեսիայի աշխատանքները ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Ս. Ազայանը, որը իր եզրափակիչ խոսքում շեշտեց, մասնավորապես, Ջավախիշվիլու մեծ ավանդը հայ և վրաց ժողովուրդների բարեկամության պատմությունը ուսումնասիրելու բնագավառում։

Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԻՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի նախաձեռնությամբ դեկտեմբերի 9—10-ին կայացավ հանրապետական առաջին իրանագիտական կոնֆերանսը, որին իրենց մասնակցություն բերեցին Պետհամալսարանի, Մատենադարանի, պատմության ինստիտուտի, հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի պատմության պետական թանգարանի, արվեստի ինստիտուտի աշխատակիցները։

Կոնֆերանսի չորս նիստերում ներկայացված 22 զեկուցումների գերակշիռ մասը նվիրված էր Իրանի պատմության հարցերին՝ սկսած վաղ ժամանակներից մինչև մեր օրերը։ Առանձնակի հետաքրքրություն առաջացրեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանի «Վաղարշ II-ը և նրա քաղաքական հարաբերությունները պարթևների և Հռոմի հետ», ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Սարգսյանի «Աքեմենյան արամեալեզու գրասենյակի ավանդույթները հին Հայաստանում», Խ. Մուշեղյանի «Մասանյան դրամների տարածումը հին Հայաստանում V—VII դդ», Գ. Տիրացյանի «Հայաստանի աքեմենյան շրջանի գեղարվեստական մետաղագործությունը» զեկուցումները։

Իրանի պատմության համեմատաբար սակավ լուսաբանված և կամ դեռևս ամենևին չուսումնասիրված հարցերի քննարկմանն էին նվիրված նաև Հ. Եղանյանի «Իրանական լուսավորիչ Մալքոմ խանի (Մելքոնյան) դերը Իրանի հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում», Վ. Բայբուրդյանի «Թուրք-իրանական հարաբերությունները և քրդական պրոբլեմը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին», Բ. Բալայանի «Ժամանակակից Իրանի հարավային շրջանի իլ-աշիրե կոչվող ֆեոդալական ինստիտուտների անկումը», Խ. Ջատոևի «Քրդերի մասնակցությունը Իրանի ազգային-ազատագրական շարժումներին (1917—1921 թթ.)», Պ. Մուրադյանի «Աբու Սաիդի Անիի պարսկերեն հրովարտակ-արձանագրության թվականը», Գ. Հարությունյանի «Հայ պարբերական մամուլը որպես աղբյուր 1905—1911 թթ. իրանական հեղափոխության պատմության», Հ. Փահլևանյանի «Բահաիզմը և նրա ռեակցիոն էությունը», Լ. Դանեղյանի «Մանր ժամանակագրությունները որպես Իրանի պատմության աղբյուր» և Ա. Ստամբոլցյանի «Ազգային բուրժուազիայի կառավարությունը և Իրանի ժողովրդական կուսակցությունը» զեկուցումները։

Իրանական բանասիրության և արվեստի մի շարք կարևոր ու ակտուալ հարցերին էին նվիրված Լ. Շեխոյանի «Ժամանակակից պարսկական վիպակի ժանրը», Հ. Մովսիսյանի «Աղթամար» լեգենդի պարսկական տարբերակը» և Ա. Կոզմոյանի «Խայամյան քառյակները որպես ռուբաիի զարգացման պատմության նոր աստիճան» զեկուցումները։

Լեզվաբանական հաղորդումներով հանդես եկան Գ. Նալբանդյանը՝ «Ժամանակակից գրական պարսկերեն լեզվի ձայնավորների շուրջը», Օ. Արղումանյանը՝ «Պարսկական անթրոպոնիմիկայի մի քանի հարցեր», Մ. Խամոյանը՝ «Տարբեր մակարդակների միավորների մասնատման հարցի շուրջը», Գ. Մելիքյանը՝ «Ժամանակակից պարսկերեն հարադիր բառակապակցությունների լեքսիկա-քերականական բընութագրման շուրջը»։

Հետաքրքրությամբ լսվեցին նաև Մ. Ղաղարյանի («Պարսկական հաստոցային նկարչության սկզբնավորումը») և Ռ. Ամիրբեկյանի («Մատենադարանի արաբա-պարսկական ֆոնդի № 1036 ձեռագրի գեղարվեստական ձևավորումը») զեկուցումները՝ նվիրված պարսկական նկարչությանը։

Իրանագիտական կոնֆերանսի աշխատանքները ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Սարգսյանը։

Ա. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ